ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2025 թվականի №---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018-2034 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՈՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի մարտի 25-ի №Ե-929-25 և մայիսի 26-ի №Ե-1736-25 գրություններով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համաձայնեցմանն է ներկայացրել Հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489-Ա որոշմամբ համաձայնեցված՝ Ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրի 2025 թվականի մասով փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներդրումային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), և գրությամբ հայտնել է, որ նախատեսված ներդրումների իրականացման ընթացքում կատարվող պլանային անջատումները կվատթարացնեն արձանագրվող հոսանքազրկումների միջին հաճախականության (հոսանքազրկում/բաժանորդ) և հոսանքազրկումների միջին տևողության (րոպե/բաժանորդ) ցուցանիշները՝ միաժամանակ խնդրելով ծրագրի իրականացման հետևանքով առաջացող պլանային անջատումների ազդեցությունը նվազեցնել 2025 թվականի փաստացի ցուցանիշներից,

բ) Հանձնաժողովը 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489-Ա որոշմամբ սահմանել է, որ բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության 2025 թվականի ցուցանիշները պետք է կազմեն 2021 թվականին սահմանված բազիսային ցուցանիշների 75%-ը,

գ) բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության բազիսային ցուցանիշները սահմանվել են Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 30-ի №407Ա որոշման 7-րդ հավելվածով,

դ) Ընկերության ներկայացրած հաշվարկների համաձայն՝ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում շեշտակի կվատթարացվեն վերոնշյալ ցուցանիշները: Այսպես, Ընկերության էլեկտրակայանքների պլանային, արտահերթ նորոգումների և հրաժարումների պատճառով 2025 թվականին հոսանքազրկումների միջին տևողության ցուցանիշները մեկ բաժանորդի մասով Երևան քաղաքում կգերազանցեն 2025 թվականի համար Ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրով սահմանված ցուցանիշները 2,18 անգամ, մարզերում՝ 2,49 անգամ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 2,41 անգամ: Ընդ որում, բոլոր այդ ցուցանիշները կվատթարանան նույնիսկ 2021 թվականին սահմանված բազիսային ցուցանիշների համեմատ: Իսկ Ընկերության էլեկտրակայանքների պլանային, արտահերթ նորոգումների և հրաժարումների պատճառով 2025 թվականին հոսանքազրկումների միջին հաճախականության ցուցանիշները մեկ բաժանորդի մասով Երևան քաղաքում կգերազանցեն 2025 թվականի համար Ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրով սահմանված ցուցանիշները 1,19 անգամ, մարզերում՝ 1,25 անգամ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 1,23 անգամ,

ե) Հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489-Ա որոշմամբ համաձայնեցված՝ Ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրի 2025 թվականի համար արդեն իսկ նախատեսված 47,6 միլիարդ դրամ ներդրումների իրականացման պարագայում 2025 թվականի տարեվերջին սակագների վերանայման գործընթացի շրջանակում Ընկերության սակագնային մարժայի և բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մաշվածության և թույլատրելի շահույթի հանրագումարը հավասարվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 1-ի №79-Ա որոշմամբ հաստատված՝ Ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների №1 հավելվածի 7-րդ կետի համաձայն հաշվարկվող մաշվածության և թույլատրելի շահույթի գումարային տարեկան առավելագույն մեծությանը, իսկ Ընկերության կողմից 2025 թվականի համար առաջարկվող 53,98 միլիարդ դրամ ներդրումների իրականացման պարագայում

մաշվածության և թույլատրելի շահույթի նշված առավելագույն մեծությունը կգերազանցվի ավելի քան 2 միլիարդ դրամով, ինչի արդյունքում՝ ավելի քան 10 միլիարդ դրամի ներդրումների փոխհատուցումը Ընկերության սակագնային մարժայով և բաշխման ծառայության մատուցման սակագներով էականորեն կհետաձգվի՝ Ընկերության համար առաջացնելով ֆինանսական խնդիրներ,

զ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ կարգավորման հիմնական սկզբունքներից են սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը սպառողներին որակյալ ծառայությունների մատուցում երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման ու ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողների՝ ռիսկերին համարժեք ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին,

է) Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձի ներդրումային ծրագիրը իր մոտ մուտքագրվելու օրվանից սկսում է դրա ուսումնասիրության գործընթացը և 60 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում՝ ներդրումային ծրագրին ամբողջությամբ կամ մասնակիորեն համաձայնություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ 7-րդ կետի համաձայն՝ կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում՝ լիցենզավորված անձը դիտարկում է Հանձնաժողովի ներկայացրած դիտողությունները և առաջարկությունները, և ծրագրի լրամշակված տարբերակը տասն աշխատանքային օրվա ընթացքում կարող է կրկին ներկայացնել Հանձնաժողովի համաձայնեցմանը: Ներդրումային ծրագրի լրամշակված տարբերակում Հանձնաժողովի դիտողություններն ու առաջարկությունները չընդունելու դեպքում՝ լիցենզավորված անձը ներկայացնում է իր պարզաբանումները և հիմնավորումները: Հանձնաժողովը ներդրումային ծրագրի լրամշակված տարբերակն ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում՝ ներդրումային ծրագրին ամբողջությամբ կամ մասնակիորեն համաձայնություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ,

ը) վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրի 2025 թվականի մասով փոփոխությունները ենթակա են մերժման՝ հաշվի առնելով դրա իրականացման արդյունքում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշների էական վատթարացումը և ավելացվող ներդրումների՝ Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման էականորեն հետաձգման արդյունքում Ընկերության համար ֆինանսական խնդիրների հնարավոր առաջացումը, որը կարող է բերել էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության մակարդակի, էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունության նվազման,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետը և 7-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2034 թվականների ներդրումային ծրագրի 2025 թվականի մասով փոփոխությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2025թ.